



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԳԱՂԱՆԵՒԷՒՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՒՌՆԻԱ ԸՆԴԱԲԱԹ 6 ՓԵՏՐՈՒԱՐ 1865

ԹԻՒ 746

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՒՌՆԻԱ 6 ՓԵՏՐՈՒԱՐ

Մեծին Բրիտանիոյ բարձրագոյն իշխան շէրլոքս
նոր տունարի՝ սովորական հանդիսի բացուեցաւ ։
Կահախօսութիւնը կը ծանուցանէ , թէ վեհափառ
թագուհւոյն կառավարութեան օտար տէրութեանց
հետ ունեցած յարաբերութիւնները կը շարունակուին
բարեկամական սիրով լի վիճակի մը մէջ զտնուելու ։
Կամայապէս ներքին գործքերը գոհացուցիչ կայուն թէ
մէջ կը գտնուին , կը յաւելու դահախօսութիւնը , և
մասնաւորապէս իւր խնդակցութիւնը կը յայտնէ
վասն նուազութեան տառապանաց այն դաւաճողուն
որոնք բամբակեղէն արուեստակերտութեան թովկապ
բին ։ Իսկ ի մասին Լամբիկայի խնդրոյն , դահա
խօսութիւնը կը ըսէ որ , թէպէտեւ այժմեան պատե
րազմական զործոց բարեկամական կարգադրութիւնը
և վարձանը մեծ հաճութիւն պիտի պատճառէ օ
գոստափառ թագուհւոյն , այսու ամենայնիւ Կորին
վեհափառութիւնը երբեք ձեռքէ պիտի չձգէ զէն
զորութիւնը՝ որուն մինչև ցայսօր հետեւեցաւ ամենայն
ճշգրտութեամբ ։

Յայտնի է որ Լոնդոնի բարձրագոյն անդամները
վեց տարուան համար կը նախաձեռնեն ։ Այս ատիկ վեց
երորդ տարին է , որով բարձրագոյն պայմանա
ժամը կը լըմընայ և հարկ պիտի ըլլայ ազգային նոր
երեսփոխաններ ընտրելու ։ Ուստի այս պատճառաւ
ազգային օրէնսդիր ժողովը այս տարի սովորականէն
աւելի ծանրակշիռ դատաւր պիտի ունենայ ։ Գլխա
ւոր գործքերէն մէկը՝ երեսփոխանական ընտրութեան
օրինաց բարեկարգութիւնն է ։ զոր քաղաքական
երեւելի անձինք ունեն կուզեն ի գործ դնել , այս
ինքն ընտրութեան օրէնքը քիչ մը ընդարձակել ,
որպէսզի արուեստաւոր անձինք ևս կարող ըլլան
ազգային երեսփոխան ընտրուելու ։ Այս բանին
վրայօք թէպէտեւ ամեն տարի ջանք կը ըլլայ , սակայն
մինչև ցայսօր այս ջանքը յաջող վախճան մի չու

նեցաւ ։ Ինչու որ կենցաղապէս անձանց մեծ կու
սակցութիւն մի օգտակար չհամարիր այժմեան ընտ
րութեան օրինաց փոփոխութիւնը , յառաջ բերելով
թէ անշարժ ստացուածոց տէր հարուստ քաղաքացի
ները արժանաւոր զգուշութեամբ և մասնաւոր խը
նամբով կը կառավարեն ազգային գործքերը , իսկ
եթէ ազգին երեսփոխանական իշխանութիւնը հա
սարակ անձանց ձեռքը մնայ , որոնք ոչ անշարժ
ստացուածք և ոչ հարստութիւն ունենալով , կրնան
զանքութիւնը և ազգը վտանգի մէջ ձգել քաղա
քական յանդուգն ընթացքով մի , ևսկից իրենց հա
մար անձնական յառաջդիմութիւնը կը յուսան ։

Այս խորհրդածութիւնները պատճառ եղան որ
մինչև ցայսօր երեսփոխանական ընտրութեան այժ
մեան օրէնքը փոփոխութիւն մի չընկալաւ ։ Բայց
չեմք զիտեք թէ այս տարի ինչ վախճան պիտի ու
նենայ այս ծանրակշիռ խնդիրը ։

Բազմաթիւ շոգեհաւերէ և մեծ նաւերէ բաղկաց
եալ անդլիական նաւատորմը մի յանկարծ երեւան
ելաւ Կաթոլիկ առջև և մեծ ազդեցութիւն պատճա
ռեց Խաղիոյ մէջ ։ Հատ լաւագոյնութիւններ զանազան
մեկնութիւններ կուտան այս բանին վրայօք և կը ըսեն
թէ Մեծին Բրիտանիոյ կառավարութիւնը անշուշտ
ծանրակշիռ գործ մի պիտի ունենայ իւր մտաց մէջ ,
որ այսչափ ծովային մեծ զորութիւն մի կը յուզարկէ
հարաւային Խաղիոյ առջև ։

Գաղղիոյ մէջ պապական վերջին կոնգրակը՝ լրա
գրութեանց և կենցաղապէս անձանց հակաճառու
թեանցը միմիայն նիւթ եղած է , և բանակոտու
թիւնը երթալով կը զրգուռի և կը սաստկանայ ի մէջ
արդի քաղաքական ընկերութեան և կը բերական ըն
կերութեան ։ Գաղղիոյ եպիսկոպոսները ամենայն
զօրութեամբ կը պաշտպանեն վերջինիւ կոնգրակին
ամեն վարդապետութիւնները և կը պնդեն թէ անի
կա չգաղափարողք և չուզէր ջնջել զհաճանադրու
կան սկզբունքը հասարակաց իրաւանց՝ զորս զազդիւ

ցիք ձեռք բերած են 1789 տարիէ ի վեր ։ Եւ
արդ՝ կըսէ զազդիւցի օրագիր մի , երբոր Պապը
կը հրատարակէ թէ կաթոլիկ մի պախարակելի մոլո
րութեան մը մէջ կանկանի , եթէ կընդունի կրօնից
ազատութիւնը իբրեւ սկզբունք և կուտուցանէ զայն
իբրեւ իրաւունք , երբոր այսպիսի վարդապետութիւն
մի կը բարոյզէ , ինչպէս կը ըլլայ որ չուզէր կործանել
զազդիւցոց սահմանադրական սկզբունքը ։

Կերկայ ամսոյ 3-15ին Գաղղիոյ բարձրագոյն ըր
բացուած պիտի ըլլայ ։ Ուր զանազան կարեւոր խըն
դիրներէ ի դատ , պապական վերջին կոնգրակին պատ
ճառաւ ծագած կրօնական խնդրոյն վրայօք ծանր
վիճաբանութիւններ պիտի ըլլան , և վերջապէս
պաշտօնական կերպիւ պիտի յայտնուի թէ Գաղղիոյ
հիմնական օրինաց իրաւունքը ամենեւին չկրնար միա
բանիլ զազդիւցի եպիսկոպոսաց պահանջմանց հետ
որոնք պիտի պարտաւորին կամ իրենց հայրենեաց
սահմանադրական օրինացը հնազանդել կամ պապին
կոնգրակին վարդապետութեանցը հետեւիլ ։

Կեկեմբերի 8ին ըստ նոր տունարի՝ հրատա
րակուած պապական կոնգրակը ամենեւին ազդեցութի
մի և շարժում մի չպատճառեց Լոնդոնի մէջ , որուն
կառավարութիւնը բոլորովին ազատ թող աւաւ
զիղէր , որ ուզածին պէս՝ եկեղեցեաց մէջ կարգայ
և հրատարակէ զյիշեալ կոնգրակը ։ Միևնոյն ըն
թացքը ունեցան Բրուսիոյ , Լատարիոյ և Սպանիոյ
կառավարութիւնները ի մասին այս շրջաբարեաւ
կան կոնգրակին ։

Խաղիոյ տէրութիւնը հրաման հանեց , թէ մինչև
որ պաշտօնական կերպիւ թոյլտուութիւն չըլլայ
կղերին , կարող չըլլայ եկեղեցեաց մէջ կարգաւոր
զյիշեալ կոնգրակը ։ սակայն Կաթոլիկ համալսարա
նին աշակերտները հրապարակաւ այրեցին զայն ի
ներկայութեան բազմաթիւ ժողովրդեան ։

Իսկ Բուսիոյ կառավարութիւնը կատարելապէս
արդիւնեց այս կոնգրակին հրատարակութիւնը իւր տէ
րութեան երկիրներուն մէջ ։

ՔԱՆՈՒՄԱՐՈՒՄ

Արժանաւիշատակ անձինք , գործք , դիպուածք ,
շինուածք եւ այլն ։

(Տես լրագրոյ 734, 736, 737 եւ 743 քիւնքը ։)

- 428 Արշակունի թագաւորութիւն Հայոց տեւալըման
580 , սպասի տատնոր , և տիրեն կուսակալը ի
Հայոց և յայլ ազգաց ։
- 431 Երբորդ տիեզերական ժողով յերեւոյս , գորոյ
զկանտան և գահաճան աշակերտք Թարգմանչաց
բերեն առտարն Սահակ մը ։
- 435 Սուրբ Սահակ ժողովով հերքեալ զաղանդ Երասու
րականաց , զրէ զթուղթ հաղորդակցութեան առ
Պրով Գառնիարք Յունաց ։
- 451 Զորբորդ տիեզերական ժողով ի Բաղիկոյն , որ
ոչ կարացին զնալ Հայրապետք Հայոց , վասն
օրտերութեան վարդապետաց ։
- 452 Աթոռն կաթոլիկոսական յիշմիածնէ փոխադրի
ի Գոլին . ուր մնայ զամս 472 , այսինքն ցամ
Տեառն 924 ։
- 489 Գառնին նշխարք Եղիշի առաքելոյն , և Գրի
գորի Ալուանից կաթոլիկոսի ։
- 491 Բարիկն կաթոլիկոս ժողով գումարեալ յիշ
միածին , նախ առաջին հերքէ զհորբորդ ժողով
տիեզերական համարելով զայն Երասուրաբ ։
- 507 Վահան Մամիկոնեան ի հիմանց նորոգէ զեկեղե
ցին և զվան իշմիածնէ . ուր կարգէ Վանահայր
դրապար Թարգմիկի ։

- 527 Երեսն կաթոլիկոս ի ժողովն Յունաց , երբորդ
անգամ հերքէ զհորբորդ ժողովն տիեզերական ,
համարելով զայն Երասուրաբ ։
- 532 Կիրակոս ճգնաւոր զտանէ զնշխար Թաղէտի
Առաքելոյն և Ստեփանոս կուսին , յորոյ վերայ
չինէ եկեղեցի և վանք ։
- 539 Երբորդ յայտնի պատկերն Քրիստոսի առ Ար
գար . որ ապա յամս 546 փոխադրի ի Կ . Պօլիս ,
ուր յետ ժամանակաց տնաի ևս փոխի ի Հաւա ,
ուր և կայ , որպէս առ , մինչ ցայսօր ։
- 552 Աթանաս Տարնեցի , հրամանաւ Մովսէս կաթո
լիկոսի , յորինէ ընոր առանք , և սկսանի նոր
թուական Հայոց ։
- 555 Հինգերորդ տիեզերական ժողով ի Կ . Պօլիս .
յորում եպիսկոպոսք Հայոց միտարանին հաւատով
ընդ Յոյնա ։
- 582 Մորիկ այսինքն Մարկիոս Հոյ Օւսկանեցի նախ
առաջին հայազգի կայսր Յունաց ի Պօլիս զամս 20
- 590 Վրացիք բամբակն ի Հայոց վասն բանի հաւատոյ ,
և կաթոլիկոսք նոցա ոչ ևս ի Հայրապետաց մե
րոյ առնուն զձեռնադրութիւն , որ ի սկզբանէ
քրիստոնէութեան իւրեանց մինչև ցայս վայր առ
եալ էին զամս իրր 300 ։
- 596 Արաքսամ կաթոլիկոս ի ժողովն Գոլանց , եր
բորդ անգամ մերժէ զհորբորդ ժողովն տիեզերա
կան , և զամենայն Վրացիա ։
- 597 Ի Կ . Պօլիս գումարի ժողով կաթոլիկոսաց Հայոց
և Յունաց . ուր Հայք երբորդ անգամ միտարանին
հաւատով ընդ Յոյնա ։

- 618 Կոստանտնուպոլիս նորոգէ զիշմիածնէ և զե
կեղեցի Զափոսիմանց . և յորինէ զարտական նյ
629 Ի Կաթոլիկ գումարի ժողովն Յունաց և Հայոց առ
Երբ կաթոլիկոսի , յորում Հայք երբորդ ան
գամ միտարանին հաւատով ընդ Յոյնա ։
- 640 Երեսն կաթոլիկոս շինէ զեկեղեցի և զվան
ի Կար վերապի Նուստուրէին յԱրտաշատ ։
- 645 Ի ժողովն Գոլանց Երեսն կաթոլիկոս չորբորդ
անգամ մերժէ զհորբորդ ժողովն տիեզերական ։
- 647 Ի գալն Կոստանտնուպոլիս կայսր Յունաց ի Գոլին ,
Երեսն կաթոլիկոս և եպիսկոպոսք Հայոց ,
չորբորդ անգամ միտարանին հաւատով ընդ Յոյնա ։
- 651 Յովնանէս վարդապետ տեղապահ Երասի կա
թոլիկոսի , ի ժողովն Մանգիկոսի հինգերորդ
անգամ մերժէ զհորբորդ ժողովն տիեզերական ։
- 653 Սուրբ Խաչն Վարդապետ յայտնի Թաղիկ ճգնաւորին
և կարգի առն Վարդապետ խաչին ։
- 680 Վեցերորդ տիեզերական ժողով ի Կ . Պօլիս ,
ուր եպիսկոպոսք Հայոց հինգերորդ անգամ միա
մանին ընդ Յոյնա հաւատով ։
- 706 Կալմաստիկան 980 իշխանս Հայոց հրով նահա
տակէ յեկեղեցւոյ Նախիջևանաց , և 940 իշխանս
յեկեղեցւոյ Թրամ քաղաքի ։
- 728 Պերմանոս Պատրիարք Յունաց զրէ թուղթ յոր
դորանաց առ Հայս , վասն միտարանութեան հա
ւատոյ ։
- 749 Մարիամ կին Կոստանտնուպոլիս կայսրի առաջին կայս
րուհի ի Հայոց ։
- 787 Եօթներորդ տիեզերական ժողով ի Եկեղեց

Վազէթ աբ Սոսքու կոչուած լրագրոյն վերջին թիւը՝ անցեալ տարւոյն քաղաքական տեսութիւն մի կը պարունակէ , որուն մէջ խորհրդայն վրայօք , հետեւեալ կտորը կը տեսնուի . զոր նշանակութեան արժանի կը համարեմք .

«Խորհրդական ազգայնութիւնը չկրնար քաղաքական (բոլորակ) իրաւունք մի ունենալ Սոսքու ազգայնութեանը քով, և այս մտօք հաշտութիւնը անկարելի է 'ի մէջ մեր ու բոլորնիսցոյ » Այս մասին խորհրդայն ժողովուրդեան եղած ամեն զիջումները՝ պարզապէս նոր աղբիւր մի պիտի ըլլայ դժբաղդութեանց՝ որ աղետալի հետեւութիւններ պիտի ունենան այս երկու երկիրներուն համար հաւասարապէս : Ուստի բոլորնիսցոյ նկատմամբ մեր ունեցած անկեղծ բարեկամութիւնը կը պարտաւորէ զմեզ որ բոլորովին շնջեմք անկախ ազգայնութիւն մի ըլլալու իրենց պատրանքը և երազները : Խորհրդական ազգայնութիւնը պէտք է որ միաւորուի Սոսքու ազգայնութեանը հետ , առանց որոյ՝ անկարելի է կայսերութեան ներքին խաղաղութիւնը , նմանապէս Սոսքու հաստատուն կարգադրութիւնը իւր մէջը :

«Սակայն բոլորնիսցոյ խնդրոյն կրօնական կողմը բոլորովին տարբեր է , և հոռմեական կաթողիկոսութիւնը կրնայ կենալ և զարգանալ մեծապէս մեր լեկեղեցոյն հաւասար : Բարեւոք քաղաքականութիւնը պարտք կը դնէ մեր կառավարութեանը վերայ ազէկ դատել բոլորնիսցոյն մէջ դժբաղդային օգուտները 'ի կրօնական օգտից» :

Վէնայի Բրէս օրագիրը քանի մը ծանօթիչ յօդուածներ հրատարակեց մօտերս առաջարկութեան մը վրայօք՝ զոր Աստրիոյ կառավարութիւնը ըրած է եղբի Բրուսիոյ կառավարութեանը 'ի մասին կարգադրութեան Եւրոպական հոգեւորական , Այս առաջարկութեան նպատակը հետեւեալն է . Աստրիան թող պիտի տայ Բրուսիոյ տէրութեան իւր ամեն իրաւունքը զորս ստացած է յիշեալ դժբաղդութեանց վերայ՝ վերջին պատերազմին մասնակց ըլլալով , որ տեղի ունեցաւ Տանիմարքի ձեռքէն զանոնք հաշտու , համար : Ի փոխարէն այս բանին՝ Բրուսիոյ տէրութիւնն ալ պիտի աշխատի համազօրութեան զգեցմանական ազգային ժողովը (Տիէթ) . որ դաշնադրութեամբ մի պարտաւոր ըլլայ պաշտպանելու Աստրիոյ ոչ գերմանական երկիրները 'ի դիպուածի յարձակման անոնց դէմ :

Վերջիշեալ Բրէս օրագիրն՝ այս գործոյն վրայօք հրատարակած յօդուածները այնպիսի դադարեղէն երեւան կը հանեն , որ Աստրիոյ պաշտօնական անձանց մէջ խռովութեան պատճառ եղան , վասնզի այս

դադարեղէն անոնցմէ մէկէն յայտնուած կը կարծուի : Կառավարութիւնը 'ի պատասխանի այս յօդուածոց ուրիշ միջոց չգործածեց , բայց միայն Բրէս օրագրութեան գրասենեակը կոխել տուաւ , և դատաւարական հետազոտութիւն և քննութիւն եղաւ անոր թղթոցը վերայ և միանգամայն դատ բացուեցաւ յիշեալ թերթին խմբագրին դէմ , տէրութեան դադարեղէն երեւան հանելու համար : Ուրեմն այս յօդուածները , զորս շատերը ուստ և անհիմն կը կարծէին , հիմնաւոր են եղբր . և այսպիսի բանախօսութիւն մի եղած է Աստրիոյ և Բրուսիոյ մէջ :

Բայց յայտնաւ , Վէրլինի Վազէթ Վասիօնալ առաջ օրագրին հետեւեալը կը գրեն Վէնայէն .

Բրուսիոյ իրեւելիք Եւրոպ իշխանին Վէնա գալուն պատճառ՝ յարձակողական և պաշտպանողական դաշնակցութեան մը հիմնաւոր պայմանները կարգի դնելն է : Այս դաշնակցութիւնը , որ զինուորական ընկերութեանց մէջ ստուգ կը համարուի , Աստրիոյ և Բրուսիոյ տէրութեանց մէջ պիտի հաստատուի կրնն :

Կըսուի նաև , որ Վազէթ աբ Վերլինա լրագիրը կը հաւատայ . թէ առաջիկայ դարեան մէջ Վաշտու խորհրդակցութիւն մի պիտի ըլլայ 'ի մէջ Բրուսիոյ թագաւորին ու Աստրիոյ և Սոսքու կայսերաց :

Եւրոպական հասած լուրերը օգտակար են միշտ Հիւսիսային զօրքանակին , որ Եւրոպական զօրքանակին հրամանատարութեամբ , օրէ օր յառաջ երթալու վերայ է , առանց ծանր ընդդիմադրութիւնի մի անհնելու : Կը հաստատեն թէ իւրեք լիւրերէն բերող իրեք կոչուած՝ Հիւսիսային ձեռքը անցնի է և թէ հաշտութիւն ընելու համար բանախօսութիւններ կը լլան 'ի մէջ Վաշտու իշխանի և իւրեք լիւրերէնի կառավարութեանց . սակայն այս լուրերը ստուգութեան կարօտ են : Այսու ամենայնիւ տարակոյս չկայ թէ Հարաւային զօրքանակը առայժմ ներքութեան մէջ կը գտնուի և օրըստօրէ տկարանալու վերայ է . ուստի հաւանականաբար և ըստ հասարակաց կարծեաց Հարաւային վիճակները երկար ժամանակ պիտի չկրնան դիմանալ Հիւսիսային շարունակ յարձակմանց :

Ամերիկայի Հարաւային վիճակաց մայրաքաղաքին մէջ հրատարակուած Լո Սանդիէն տը Ռիչմոնտ օրագիրը՝ որ միտք Դ. Տէվիս նախագահին բերանն է , նշանակութեան արժանի՝ յօդուած մի կը հրատարակէ , որուն զիջաւոր կտորները ասոնք են . «Հարկ է որ հանգաբաժնութեամբ աւանդու սըրտի խորհիմբ 'ի վերայ պարագայից որոց մէջ կը

գտնուիմք , և գործունէութեամբ ու հաստատամտութեամբ ձեռք առնուիմք այն քաղաքականութիւնը զոր խոհեմութիւնը կը ցուցնէ մեզ և հարկաւորութիւնը պարտք կը դնէ մեր վերայ : Վասնզի տղայութիւնէ հեծել դժբաղդութեան մէջ , նմանապէս վատութիւնն է ինքըզինքը յաղթուած խոտովանիլ : Անտեղի և անարժան է պատերազմը թող տալ . վասնզի քաղաքի մարդը՝ որ կը մարտնչի 'ընդդէմ ձախորդութեան , որանշացման արժանի է և խոտուոյ ու մարդոց ուղադրութիւնը իւր վերայ հրաւիրելու իրաւունք ունի :

«Կարծեմք թէ մեր վերջին ձախորդութիւնները պատրաստեցին մեր ժողովուրդեան միտքը ամենէն ծանր զոհողութեանց , եթէ հարկաւոր համարուին մեր գործոյն յաղթութեանը համար : Եւ իրօք , ասոնք զոհողութիւններ չեն երբոր այժմեան պարագայից նկատմամբ կը խորհիմք անոնց վրայօք : Վասնզի միթէ աւելի ազէկ չէ , որ մեր գերիները մեք ազատ ընենք և 'ի պատերազմ հանեմք Հիւսիսային դէմ , քան թէ անոնք մեզի յաղթելով՝ միանգամայն տիրեն մեր գերիներուն :

« Եթէ մեք մեր ստացուածքէն ինքնայոթաբ գրկուելով կառավարութիւնը մեր ձեռքը պահեմք , մեր կացութիւնը շատ աւելի ազէկ պիտի ըլլայ քան եթէ թշնամին զմեզ զրկէ և շղթայակաց ընէ զմեզ . . . Ս'իթէ արժանի է պահել մեր որդիքը որպէսզի Հիւսիսային ձեռքը ըլլան : Կարծեմք , մեր որդիքը յուղարկելէ ետեւ , միթէ կրնամք մեր դրամը մեր ձեռքը : Ուստի թող Կառավարութիւնը խնդրէ ինչ որ հարկաւոր է և ինչ որ կը ծառայէ մեր իրաւանց յաղթութեանը համար : Եթէ հարկաւորութիւն ունի մեր երկիրներէն , մեր տուններէն , մեր գերիներէն , մեր ձիերէն , մեր դրամն և մեր անձէն , կը պարտաւորեմք տալ նմա այս ամեն բաները : Ս'իթէ զարմանալի չէ՝ որ յամառութեամբ փախադիմք պահելու այն բանը որ նուազ արժէք ունի , ինքըզինքնիս տամք , և մեր ստացուածքին զաւրվ մտածեմք և վարանիմք : Ս'եր հայրենասիրութիւնը՝ վերջապէս պէտք է որ հեռանայ այս փորձութեանէ » :

Այս յօդուածէն կը տեսնուի թէ Հարաւային վիճակները մեծ ներքութեան մէջ կը գտնուին , և պաշտօնական լրագիրները վերջին ճգամք կաշկաւորն ժողովուրդեան հայրենասիրութիւնը զօրացնել , որ հետեւեալ պատահած ձախորդութեանց պատճառաւ մեծապէս վճատեալ է :

Միտք Դէվրսըն Տէվիս նախագահը կառավարի ժողովուրդեան՝ որ գերիները ազատ ընեն . որով կը յուսայ , թէ Եւրոպիոյ տէրութիւնները և մանաւանդ Անգլիան և Ֆրանսիան պիտի ճանաչեն և պիտ

- ուր կախկողութեան հայոց վեցերորդ անգամ միարանին հաւատով ընդ Յոյն :
- 788 Մարիամ կին Կոստանդին կայսեր՝ Երկրորդ կայսերուն Յունաց , յաղգէս Հայոց :
- 815 Լեւոն արծրունի՝ Երկրորդ հայազգի կայսր Յունաց և կին նորա Թէոդորա , Երկրորդ հայազգի կայսրունի :
- 834 Զաքարիայ կաթողիկոս , 'ի միւսնոյն աւուր ձեռնադրի սարկաւազ , քահանայ , կախկողութեան և կաթողիկոս :
- 859 Իշխանութիւն Մարգարանայ տեւալ զամս 430 , աստուծոյ դադարի և սկսանի թագաւորութիւն Բագրատունեայ :
- 862 Ի ժողովն Երկրակաւանի , Զաքարիայ կաթողիկոս և Աւուր մեծ իշխան Բագրատունեայ կախկողութեան Երկրորդ անգամ միարանին հաւատով ընդ Յոյն յորդրանք Փոստ Կատրիկոսին Յունաց և վահան կախկողութեան Երկրի :
- 867 Վասիլ Արշակունի՝ նախ Երրորդ հայազգի կայսր Յունաց 'ի Կ. Պոլիս զամս 19 :
- 874 Մաշտոց կախկողութեան չինէ զեկեղեցի և զվանս 'ի Սեան կղզի :
- 886 Լեւոն Արշակունի նախ Երրորդ հայազգի կայսր Յունաց զամս 25 :
- 888 Ստեփաննոս հայկազն , որդի Վասիլ կայսեր՝ նախ Երրորդ Կատրիկոսը Յունաց 'ի Հայոց :
- 908 Ի Վասպուրական սկիզբն լինի թագաւորութեան Արծրունեայ , որ անդ և 'ի Սեբաստիայ , ընդ 9 թագաւոր , տեւալ զամս իր 170 , վերջանայ

- յամին իր 1080 :
- 911 Կոստանդին Պէրպլուսէն՝ նախ հինգերորդ հայազգի կայսր Յունաց զամս 48 :
- 919 Ռոմանոս Վաշտու իշխանի Երկրորդ հայազգի կայսր Յունաց զամս 26 :
- 924 Սթոն կաթողիկոսական 'ի Ռոմանոս Կատրիկոսին 'ի Վասպուրական , ուր և մնայ զամս 70 :
- 930 Բագրատունեայ Հայ կրօնաւորաց հաւանութեան 'ի Յունաց զամս 'ի Հայաստան , և չինեն զվանս Կաթողիկոս , Կատրիկոս , Գալիկոս , Հաւանութեան (որ այժմ կոչի Խաչատուր) , Խաչատուր , Գալիկոս , Հաւանութեան (որ այժմ կոչի Խաչատուր) , Մովսէս , Կատրիկոս , Կատրիկոս :
- 931 Թէոփիլակտոս որդի Ռոմանոսի կայսեր , նախ Երրորդ Կատրիկոսը յունաց յաղգէս Հայոց զամս 26 :
- 939 Ռոմանոս որդի Պէրպլուսէնի՝ նախ Երկրորդ հայազգի կայսր Յունաց :
- 961 Սեփի քաղաք Երկրի չինի աթոռ Բագրատունի թագաւորաց մերոց զամս 84 :
- 962 Ի Կարս քաղաքի կանգնի Կորդիկ թագաւորութիւն Հայոց , որ ընդ երեք թագաւորաց տեւալ զամս 122 , սպառի յամս 1080 :
- 963 Վահան կաթողիկոս և այլ եկեղեցականք ոմանք Երրորդ անգամ միարանին ընդ Յոյն հաւատով :
- 968 Խոսրովանոյ թագաւոր՝ չինէ զվանս Հայրատ և Սանդիէն ,
- 669 Զիւլայ մատն Պեարոսի Սեբաստիայ բերալ լինի 'ի Հայաստան և աշխ յիշխանութեան , ուր և սպանի մինչև յայսօր : Յովհաննէս Զիւլայ , Երրորդ կայսր

- յունաց յաղգէս Հայոց :
- 970 Ի Բագրատունի Պեարոսի , սկսանի Կորդիկ թագաւորութիւն Հայոց , որ ընդ վեց թագաւորաց ձեռն զամս 196 , սպառի 'ի 1160 :
- 976 Վասիլ և Կոստանդին Երրորդ , նախ Երրորդ և 10 Երրորդ կայսրեր Յունաց յաղգէս Հայոց :
- 988 Ի Տաշիր գաւառի Գուգարոյ՝ սկսանի Կորդիկ թագաւորութիւն Հայոց , որ թագաւորեն Գալիկոս անհողին զամս 66 , և որդի նորա Կորդիկ յամս 1016 զամս 64 . բայց տիրութեան նոցա սպառի յամս 1140 : Ս'ի յոյց ամօթալի անմիապատնութեան և անհաղադարձութեան նախնեաց մերոց , արժան է յուշ առնել , թէ յայժմ միջոցի միայն 'ի մեծն Հայաստան կային Երկր թագաւորը Հայոց . այսինքն 1 Գալիկոս՝ օրինաւոր թագաւոր յԱմի . 2 Կարս 'ի Կարս . 3 Աւուր 'ի Վասպուրական . 4 Գալիկոս 'ի Սեբաստիայ , 5 Սեբաստիայ 'ի Ռաշտիկ . 6 Վասիլ 'ի Սեբաստիայ , և 7 Գալիկոս 'ի Տաշիր : Վ'այ Հայաստանի :
- 989 Սամուէլ Հայ Գերլանցի նախ թագաւոր Պուլիպոս զամս 4 : Յոյն միտրապոլիտ Սեբաստիոյ և Սեբաստիայ՝ զրեն թագութ յորդրանայ առ խաչիկ կաթողիկոս , վանս միարանութեան հաւատոյ :
- 993 Սեբաստիայ կաթողիկոսական 'ի Վասպուրականի Կորդիկ յայսօր . ուր մնայ զամս 72 :
- 994 Վահրամ մեծ իշխան՝ չինէ զվանս Մարմարա չին և զԵրզնէ :
- 1028 Զայի կին Ստեփաննոս՝ Երրորդ կայսերունի յունաց 'ի Հայոց :
- 1034 Թէոփիլակտոս հինգերորդ Հայ կայսերունի Յունաց :

Լ.Օ.Գ.ԸՅԻՆ

տի ընդունին զՀարաւային գաշակցութիւնը իբրեւ անկախ տէրութիւն մի :

Թէպէտեւ Եւրոպայի օգուտը , և մասնաւորապէս Լոնդոնի օգուտը կը պահանջէ որ Լեւոնտիայի Հարաւային վիճակաց գաշակցութիւնը դատ ու անկախ տէրութիւն մի ըլլայ . այսու ամենայնիւ , այժմեան պարագայից մէջ , մանաւանդ եթէ Հարաւայինը չի կրնան տակաւին երկար ժամանակ դիմանալ , չկարծուիր որ օղնութիւն մի հասնի անոնց Եւրոպայէն :

Կոստանդնուպոլսոյ լրագրութիւնները Լեւոնտիայի գրեթէ զբոսած հետեւեալ լուրը կը հրատարակեն , որ հաստատութեան կարգող իւրեքի մեզ :

«Դատ խօսք կըլլայ Պոնտի մէջ թուրքական փորձի մը վրայ , որուն քիչ մնաց որ զոհ պիտի ըլլայ լրագրատարութեան փոխարէն : Ահա տարի ինչ կերպիւ տեսնելու ունեցաւ դորձը :

«Բարձրագոյն Խոնայի փաշան , որ ժամանակէ մը 'ի վեր այսպիսի գործոյ մը վրայ կ'ապահովուէր , անկախութիւնը ճշդի նստած ժամանակը՝ հրապարակելով իր բոլորը որ ուտէ սեզարը բերուած մէկ կերպով : Բայց որովհետեւ թիւեր թողութիւն ինքնիշխանութիւնը , փոխարէն թուրքական իր խոհապարտը կ'ան չիլ տուաւ և հրամայեց որ իր պարտաւորութիւնը իր քաղաքներէն քիչ մը ուտէ : Խոհապարտը հնարաւորութիւն կերպով . բայց անմիջապէս գեղեցիկ ինչպէս և մնաւ : Յայնժամ փոխարէնի բոլորը , որ օտար տէրութեան հպատակ է , իսկայն բանաւորութեան , և հետեւեալը Ա. Պէրսիանոյի յաւանդեցաւ զբարձրի մի ընկերութեամբ և անկէջ նստ մի գործելով Եւրոպայի գրեթէ ամբողջ : Պոնտի մէջ ունեցած՝ յիշեալ թիւեր անշարժ ստացուած . քը 'յաղածին գրաւեցաւ . բայց Եւրոպայի Բարձրութիւնը հրաման ըրաւ որ անոնց արժէքը հասուցուի իրեն : Ահա այսպիսի է համար , որ տարածուցաւ ոչ ոք եղեւ թեան վրայը» :

— Բարձր տը Մարտի Լրագրոյն մէջ հետեւեալ յօդուածը կը հրատարակէ .

«Եզրաւորութիւն փոխարէնի եղբայրը Մուստաֆա փաշան մտաւր կը պատահէ 'ի Փարիզ և 'ի Լոնտոն . որ կերթայ հաստատուելու համար իր իրաւունքը 'ի յաւանդութիւն այժմեան Փոխարէնի : Կերեւի թէ Փոխարէնի կողմէ իր արժանաց յաւանդութիւնը ուղղակի գծի փոխել 'ի վնաս իր եղբորը , որուն պաշտպան կը հենան օտմանտի օրէնքը : Կը ծանուցանեն թէ Փոխարէնի ևս միտք ունի , առաջինը գործուն մէջ , ճանաչարձորութիւն մի ընել 'ի Պաշտպան , կայսեր օրէնքութիւնը խնդրելու համար 'ի դորձադարձութիւն իր առաջարկելու նպատակին» :

Յաւախ սրտիւ կը տեսնեմք թէ ազգային դորձքերը զրեթէ ամեն տեղ անկարգ ու ձախորդ վիճակի մը մէջ կը գտնուին : Լեւոնտիայի , Բարձրութիւնը և խոհապարտը , որոնք մեր ազգային եղբայր պաշտօնական ու մասնաւոր ընթացքին առաջնորդ պէտք էին ըլլալ 'ի յառաջագիմութիւն և 'ի պայծառութիւն Լեւոնտիայ , ընդհանրապէս օրէնսդրութիւնը հետեւեալ տարածաշրջաններէն և երկարապարտութիւնը կը տիրեն միշտ մեր ազգայնոց մէջ ամեն տեղ :

Եթէ կը խօսինք իզմիրի Հայ բնակչաց մէջ մօտեւս պատահած անկարգութիւնները պատմել . որոնք ցաւալի հետեւութիւններն են այն ամեն ապօրինաւոր եղբունքանց , զորս Լեւոնտիայ երկարօրէն նկարագրած է իւր խախտութեան թերթերուն մէջ : Երբեք է մեզ սակայն հաւատալ , թէ համաձայնութիւնը և միաբանութիւնը՝ որոշմութեամբ Լուսնու ծոյ և խաղաղութեան ջանքիւ ազգայնէր երեւելու օրինակ , պիտի չուշանայ վերանորոգուելու մեր մէջ , մանաւանդ որ մեր առաջնորդական փոխանորդ տէր Յակոբոս Չիլիկլիքեան վարդապետը պարտաւորեցաւ իրեն յանձնուած հոգեւոր հօտը թողուլ և վերադառնալ 'ի Կոստանդնուպոլս : Այժմեանից հայերը մեծ անհամբերութեամբ կըստեն այն բարեբաղդ աւուր , յորում իրենց վիճակին իսկական Լուսնորդ , այժմեան Կ. Պոլսոյ Պատրիարք , ամենապատիւ տէր Պօղոս սրբազան արքեպիսկոպոսը պիտի գայ իւր հովուական աթոռը նստելու 'ի մեծ ուրախութիւն սրտի իւր ամենասիրելի հաւատարիմ ժողովրդեան . որ յայնժամ միայն կարող պիտի ըլլայ իւր վաղեմի բարեկարգ ընթացքը և իւր կատարեալ հանդարտութիւնը ձեռք բերել և յառաջագիմել ամենայն բարեմասնութեամբ :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒՄ

«Բաղաբական ժողովն անցեալ ուրբաթ օրը ընդհանուր ժողովի դիմանին , Տնտեսական խորհուրդը և Եւրոպայի և Հիւսիսային հոգաբարձութեանց հետ համախորհուրդ նկատ ընելով՝ ըստորում ազգային տրոյ հաւաքումը գեւ նոր սկսած է , և կեդրոնական անտուկին նիւզ վիճակը չենքրի առայժմ՝ հիւսնդանոցի յատկապէս նպատան ստորոգապէս հատուցանել , որոնց բարեպաշտ ազգայնիներէ տաժամանակեայ կերպով և մէկ անգամի համար կամաւոր նուր հաւաքել : Ստորի հիւսնդանոցի հոգաբարձութեան յանձնուեցաւ որ 400 հազար դրոշմի տոմսակներ տպել տալով հիւսնդանոցի ժողովն , վաւերացնէ իր կեդրով և կամաւոր նուր :

Հաւաքելու ձեռնարկէ : «Բաղաբական ժողովն այսպիսի արտաքոյ կարգի միջոց մը դորձադրելու հարկադրեալ ըլլալը յայտնելով արժան դատած է ազգայնոց որոշմանը զգացմանը կոչում ընել , և հրաւիրել զանոնք որ իրենց բարեպաշտութենէն զրգեալ չնորհ ընեն հիւսնդանոցի հոգաբարձութեան կողմէ ներկայանալիք տոմսակներէն առնուլ , Սուրբ Փրկչի տառապելոց օգնութեան հասնելու համար :

Ի պատրիարքարանց Հայոց , 21 Յունիս 1865 Կոստանդնուպոլս :

Կոստանդնուպոլսոյ ազգային Բաղաբական ժողովն՝ ներկայ 1865 տարուան ազգային ելեմտից հաշուեկէնով պատրաստելու և հարկաւորութեան խնդիրը՝ ըստ պահանջման պարագայից կարգադրելու համար յանձնաժողով մի կազմեց , որ բաղկացեալ է հետեւեալ երեւելի անձինքներէ .

Վսեմաշուք Տեաքը
Սահակ Լաթո Էֆենտի ,
Գրիգոր Լաթո Էֆենտի ,
Ն. Ռուսինեան Էֆենտի :

Կը լսեմք թէ Եզրաւորութիւն առաջնորդական փոխանորդը գերապատիւ տէր Միլիտի արքեպիսկոպոսը՝ Պաշտպան Բաղաբական խորհուրդը դորձադրելու համար այս մայրաքաղաքին Հայոց եկեղեցւոյն տաժամանակ հաշիւը տեսնելով և քննելով , 800 հազար դրոշմի չափ պարագը ելեր է :

Լայ լուրը՝ որ անհատաւի կերեւի մեզ՝ և շատերուն , եթէ ստոյգ է , յայտնի ապացոյց ժըն է որ Պաշտպան ազգային դորձքերը անկարգ կերպիւ կը կատարուին եղբւր շատ տարիներէ 'ի վեր :

Լսեց բաւական ժամանակ յառաջ ընդհանուր ժողովով ազգային տրոյ խնդիրը որոշուած և անոր դորձադրութիւնը Բաղաբական ժողովին յանձնուած էր : Յաւօք սրտի կը լսեմք որ թաղերէն գեւ նոր սկսեր են զրկել բաշխման ցուցակները . և ինչպէս Եւրոպայի հոգաբարձութիւնը 'ի պաշտօնէ յայտնած է , գեւ նոր պիտի սկսի ընդհանուր տրոյ հաւաքման ձեռնարկել . որով վարչութեան գրամական վիճակը անտանելի կ'ընդունի :

Կը լսեմք թէ Կ. Պոլսոյ ազգային և կրօնական ժողովները քանի մը անգամ 'ի խորհուրդ դուստրուեր են սուրբ Եւրոպայի վանուց համար կանոնադիր մը պատրաստելու : Եւրոպայի քննութիւններէ և խորհուրդներէն ետեւ , ժամանակիս պարագայից յարմար օրինակուր կանոնադիր մի արդէն խմբադուեր ու Եւրոպայի ամենապատիւ նորընտիր սրբազան Պատրիարք հօր մատուցուեր է . որուն հաւանութիւնը ընդունելէ ետեւ , ազգային ընդհանուր ժողովը պիտի դուստրուի և յիշեալ կանոնադիրը անոր պիտի ներկայացուի , որպէսզի իւր հաւանութեամբ կատարելապէս վաւերացնէ զայն : Փափագելի է ապաքէն որ ազգային ժողովոյն դուստրումը շատ չուշանայ , որպէսզի ամենապատիւ տէր Եւրոպայի սրբազան Պատրիարքը կարող ըլլայ օր յառաջ իւր աթոռը երթալ և սուրբ Յակոբեանց վանուց ամեն կերպ բարեկարգութեան և յառաջագիմութեան հոգ տանել իւր սովորական եռանդուն ազգասիրութեամբը :

Մարտի 676 թուոյն մէջ հետեւեալ կը հրատարակէ՝ որ վանայ առաջնորդութեան անկարգ վիճակին վրայօք համառօտ տեղեկութիւն մըն է :

«Վսեմն բազմութիւ ստորադրութեամբ մեզ ուղղութեամբ նամակ մը գտնաւոր կընէ գերապատիւ Սուրբ նորդէն թէ Ս. Պաշտպան մէջ գործածուած վերջին անկարգութեանց և սովորի եղբունքութեան նկատմամբ աղուցին Վարչութեան ըրած տնօրէնութիւններն անդորձադրելի ըրերէ :

Ինչպէս արդէն յայտնի է մեր արքայ ընթերցողաց՝ ազգային Վարչութիւնը կրօնական և քաղաքական խառն ժողովով կոչուց անապատի վանահայր Պողոս վարդապետի՝ Ս. Պաշտպան աթոռին տեղապահ կարգերէն , և ինքնընտիր Խոշաւուր եպիսկոպոսին կաթողիկոսութիւն ալ ապօրինաւոր և անվաւեր հրատարակելով՝ իմ անապատը զրկել որոշեր և այս տնօրէնութեանց գործադրութիւնը Վանայ Սուրբնորդին յանձնել էր :

- 1079 Թագաւորութիւն Բագրատունեաց՝ տեւեալ դամ 220, զագորի աստանօր . որով և ամենայն Հայաստան խալաւ անկանի ընդ տիրութեամբ Պարսից , Տաթարաց և Յունաց :
- 1080 Կիւրիկիւ լինի աթոռ Ռուբինեան իշխանաց և ապա թագաւորաց և կաթողիկոսաց Հայոց :
- 1147 Աթոռն կաթողիկոսական փոխադրի 'ի Հոռով կըս , և միայ անդ դամ 147 :
- 1168—1179 Յուսուր Ենոքապոլսի և յաջորդի նորա , Հայք ինքերորդ անգամ միարանին ազգային ժողովով ընդ Յոնս :
- 1170 Ա. Մարգարէ այրին 10,000 ձեռագիր մատենաւ մեր 'ի Բաղաբարդ :
- 1271 Հայք յԱնի քաղաքին գաղթական զնան 'ի Լեւոնտեան , և հետգհետէ դատնան 'ի հաւատաւաստ :
- 1272 Նշխարք սրբոյն Երեսնի յայտնին 'ի Թիւրաւանի մօտ յերգեցալ :
- 1394 Աթոռն կաթողիկոսական 'ի Հոռովայն փոխադրի 'ի Սու , ուր մնաց դամ 147 :
- 1296 Մարտիմ կին Միքայէլ կայսեր , վեցերորդ կայսերուն Թուրքի 'ի Հայոց :
- 1311 Սիկորն պատրիարքութեան Հայոց Եւրոպայի միջադրի , որ տեւէ մինչև յայսօր :
- 1323 Անի քաղաք Երեսնի 'ի Բաղաբարդ կործանի և ամալ յանայ :
- 1375 Վերջին Լեւոն լաւնայի թագաւոր Հայոց Լեւոնիկոյ՝ զրկի 'ի տիրութենէ , ընդ նմա և թագաւորութիւն Ռուբինեանց տեւեալ դամ 177, զագորի խալաւ :

- 1402 Լանկիւմուր դամենայն ձեռագիր մատենաւ մեր 'ի Հայաստանի տարեալ 'ի Սիկորն փոխէ յաւատարակի :
- 1441 Աթոռն կաթողիկոսական զինի հաջարտեալ թագաւորութեան 'ի 452—1441, գաւնայ գայ յԱմիս , ծին , ուր նստին կաթողիկոսը մեր մինչև յայսօր :
- 1461 Սիկորն պատրիարքութեան Հայոց 'ի Կ. Պոլս , որ տեւէ մինչև յայսօր :
- 1567 Աբգար օմն նախ առաջին սիկորն առնէ տպագրութեան Հայ մատենից 'ի Վեհապի :
- 1628—55 Մովսէս և Փիլիպպոս տղաւոր կաթողիկոսը բաղում շինութեամբ յԱմիս ծին և այլով գովելի գործով պայծառանան յազգիս :
- 1656—1710 Յակոբ կաթողիկոս , Թոմիս եպիսկոպոս , Խաչատուր և Ռական վարդապետ , Մատթէոս և Ղուկաս վանանդեկի , և այլք հիմնեն և պայծառացուցանեն զպատրիարքութիւն Հայ մատենից :
- 1765 Սիմէոն ազգասէր կաթողիկոս , սահմանէ յԱմիս ծին զտպարան Հայ գրոց , որ տարեալ անհամար ձախորդութեանց յերեսայ երկրաւարաց , այժմ նորոգ ծաղկի :
- 1781 Հայք 'ի Ղրիմ գաղթեալք հիմնեն զՎախիճեան , և 'ի 1792 զՊրիշիթորապօլ քաղաք :
- 1815 Լաւարեան իշխանապետը կանգնեն 'ի Մոսկով զձեմարան դիտութեանց , յոր յամին 1826 յաւելուն զտպարան Հայ և այլազգի մատենից ,
- 1856 Կոչարն Ռուսաց Նիկողայոս հաստատէ զսինոք դոս իշխանի և զվանոն վարչութեան նորա :

Մեզ ուղղուած նամակը կը ծանուցանէ թէ գերա .
խօսակցութեամբ արքայազն Վարդապետ Վարդապետ
հրամանին և որոշման, հակառակ նաև Վանայ ժողովուրդին
վրդեան և Աղթամարայ թեմայուց անկախութեան ու
ընդունելու են, թող չէ տուել Պօղոս վարդապետին որ
Աղթամար երթայ, պատճառելով թէ ժողովուրդը կը
խռովի և չընդունիր. միանգամայն ապօրինաւոր կա-
պաւոր զրկելու : Ասոնք ծանուցանելէ ետեւ, նամակաւ
գիրները կը զանգատին նաև թէ Ս. Առաքնորդը Սահ-
մանադրութիւնն ալ անգործադրելի թողուցած է և այլն
և այլն, և կը խնդրեն որ ազգային Վարդապետը Վա-
նայ առաքնորդութեան անկախ վիճակին դարման մը
ենք գործելու հրամանաւորը և անորենութիւնները յոր-
գել տալու համար :

Մ Ո Ւ Խ Թ Ա Ս Ե Ր

ԳՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ի տպարանի Տէտեան, Իզմիր 1864 :

Այս փոքրիկ գրքուկը, որ տաճկերէն պարզ լեզ-
ուաւ շարադրուած է, Հայկա թեմակոյ մեծարգոյ
Գրքարձեանքի Յովնանէ աղա Հայ վաճառականին
աշխատասիրութիւնն է . որ ազգասիրական գովելի
եռանդէ շարժեալ յօժարամիտ մեծք գարկերէ ալս
բարեպաշտական գործոյն բարգմանութեանը, սր-
պեղի իրենց մայրենի լեզուին անտեղեակ եւ միայն
տաճկերէն գիտցող բազմաթիւ Հայերը կարող ըլլան
համառօտ տեղեկութիւն մի ստանալու. Հայաստան-
եայց՝ ուղղափառ սարք Եկեղեցւոյն քրիստոնեական
վարդապետութեան վրայ :

Յիշեալ գրքուկը՝ Կ. Պօլսոյ կրօնական ժողովոյն
հրամանաւոր եւ Անքաղաքի մեծ հաստատեալ Թանգա-
րանի ընկերութեան օգնութեամբ ի լոյս ընծայուե-
ցաւ, և կը վաճառուի 5 դուրոյի ետեւ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 3 ՓԵՏՐՈՒԱՐ

Մանչեսթըրի բամբակի մշակութեան ընկերու-
թիւնը պատուոյ միտաւ մի շնորհեց վսեմափայլ
Վարդապետ Մէհմէտ փաշային վասն գործունեայ
շննորդի զոր ի գործ գրաւ ի յառաջագիմութիւն
բամբակի մշակութեան թուով ի մէջ :

Վարդապետ Մէհմէտ փաշային ի մէջ շնորհեց

“Գրեթէ երեք տարի կայ, որ Իսկիւտարի Յու-
նաց և Հայոց հասարակութիւնները կու մի ունե-
ցան իշնի—Մահալէի գերեզմանատան վրայ, որ
գատի մը պատճառ տուաւ, Եւս դատը մօտերս
վերջացաւ հետեւեալ կերպիւ :

“Յիշեալ գերեզմանատան գետինը չորս հաւասար
մասանց բաժնուելով չորս գերեզմանատուն պիտի
ըլլայ . մէկը Յունաց, միւսը Հայոց, երրորդը հու-
մեական Հայոց և չորրորդը Հրէից համար :

Անոնք որ այս դատը բանալու խորհուրդ տուին,
պիտիցալին անշուշտ որ յանձնաժողովոյ մի միջոցաւ
այս գործը կարգադրելու խոհեմ առաջարկութիւնը
նախապատիւ չհամարուեցաւ . վասնզի կը հաստատեն
թէ դատաստանական ծախուց դումարը՝ գերեզմա-
նատան արժէքէն աւելի է” :

— Կայսերական հրովարտական, զինուորական ար-
քունի դպրոցին վերատեսչութիւնը դարձեալ Վա-
լիպ փաշային յանձնուեցաւ :

— Պաշտատէն մինչև Պարսա երթալու հեռագրա-
կան դժին շինութիւնը ըմբռնալով, Հնդկաստանի և
Եւրոպայի մէջ հաղորդակցութիւնը վերջապէս յա-
ջողութեամբ հաստատուեցաւ : Պաշտատի ընդհա-
նուր կառավարիչ Կապի փաշան անցեալ շտաբի
առաջին հեռագրական նամակ մի յուղարկեց Պոլսա-
յի ընդհանուր կառավարչին, շնորհաւորելու հա-
մար հեռագրական հաղորդակցութեանց հաստա-
ուելու ի մէջ Հնդկաստանի և Եւրոպայի, ու կէս
ժամէ ետեւ պատասխանը ընկալաւ : Ուստի յետ
այսորիկ քանի մը ժամուան մէջ, Կոստանդնուպոլսի
հաղորդակցութիւն պիտի լուսնայ Լնդգիական
Հնդկաստանի զլիւստը քաղաքաց հետ . ուսկից
մինչև ցայսօր 25 օրէն պակաս լուր չէր կրնար առ-
նուիլ սովորական ճանապարհաւ :

— Մայրաքաղաքի Լնդգիոյ գետտան վսեմափայլ
ընդ Հէնրի Պիւլիքը, որ իւր առողջութեանը հա-
մար ժամանակէ մը ի վեր Գահիրէ կը գտնուի և

շատ մարդասիրութիւն կը տեսնէ բարձրապատիւ Փո-
խարայէն, առաջիկայ Մարտ ամսոյն մէջ պիտի վե-
րադառնայ . կըսեն, ի Կ. Պօլս :

ՔԱՆԱԿԱՆ ԵՒ ԻՒՐ

Զմիռնիա, 6 Փետրուար :

Գրեթէ տվոյ մըն է որ հարաւային հովը կը տրէ և
շարունակ անձրև կուգայ փոքրիկ ընդհատութիւնն
ով : Սննդեայ այս առատութիւնը, որ չտեսնուած
բան է իզմիրի մէջ, ոչ միայն երկրագործութեան քիչ
կամ շատ վնաս պիտի պատճառէ, այլև մեր կլիմային
սովորական խոնավութիւնը աւելցնելով և հաստատուն
պահելով, բնակչոյ առողջութեանը վրայ ևս կրնայ
վնասակար ազդեցութիւն ունենալ . անոր համար ամեն
մարդ կը փափաքի որպէսզի հիւսիսային հովը, որ ա-
ռողջարար է այս քաղաքի համար, չաւտուի յաճախ
հարաւային խոնաւ օդոյն :

Գոհութիւն Ստուածոյ, երկուսնէն միւսեւ տնձրե-
ալից անկողնի միջնորդութեամբ փոխարկեցան և արեւափայլ
պայծառ օր կրնէ . թէպէտեւ տեղական չեղիր՝ ըստ
որո՞ւ օդը Արեւելքէն կուգայ ու շատ մեղմ է : Այս-
մանի ընթացքով 8 աստիճան կը նշանակէ :

— Մօտէ Երեւոյ Ուրման հոշակաւոր հեղինակը
Վարդ Յիսուս կոչուած ամբարիշտ գրքոյն, ընկերու-
թեամբ իւր ընկերին անցեալ շաբթու հասաւ իզմիր
Պէտրոսէն դալով և ուր օրի շաբթու քաղաքը մնալ
ետեւ մեկնեցաւ Յունաստան երթալու :

— Մարտի վսեմափայլ Պօղոս—Պէյքը՝ անցեալ
շաբթու հասաւ իզմիր ընկերութեամբ մեծաշաք տեղաց
Մուպպաճեան Յակոբ Լիֆնտիւնի և Վառուտիւնի
Յակոբ Լիֆնտիւնի : Կ. Պօլսոյ այս երեւելի անձինքը
որոցմէ երկուքը Վերջին յարգամեծար Յարութիւն
ազգային տունը օթեմանկցան և Պատուաւորական Յա-
կոբ Լիֆնտիւնի իւր եղբորը մեծարգոյ Եփրէմ աղային
տունը իջաւ, բազում յարգանքով և արժանաւոր մե-
ծաւորեց պատուաւորական քաղաքի ազգային երեւե-
լիներէն . որոնք զանազան հոյակապ խմոր, խմորքներ
և պարսկականներ տուին ի պատիւ Նոյա :

Վսեմափայլ Պօղոս—Պէյքը, նմանապէս Մուպպա-
ճեան և Պատուաւորական մեծաշաք Լիֆնտիւնի երեւե-
լիներէն ի Պօլս օսմանկան շտաբով :

— Վսեմափայլ Պաշտատի Սրբութիւն—Պէյքը ևս,
անցեալ շաբթուան ի վեր իզմիր կը գտնուի Պօլսէն
դալով, և երկ յիշեալ մայր քաղաքը գնայ :

— Կը հաստատեն թէ Գարձարային Պատիւն հրաման
եկած է, որպէսզի յետ այսորիկ քրիստոնեայ ազգաց
մեծաւորները, քաղաքէն քիչ մը հեռու տեղ մը թաղուին
ըստ օրինակի մահմադական և հրէայ ժողովուրդոյ : Կը-
լանք թէ նախնային ընդհանուր կառավարիչ վսեմա-
փայլ Պաշտատ փաշան մօտերս այս հրամանը պիտի հա-
ղորդէ իզմիրի քրիստոնեայ ազգաց :

Մեծարգոյ Վարդապետ Յակոբ աղան և իւր եղ-
բայրը մեծարգոյ Պօղոս աղան որոնք քաղաքի մէջ
երեւելի Հայ վաճառականներ են, իրենց պարկեշտ ընկերու-
թով, տնիւր բնակարանները և իրենց գործունեայ
շննորդ ձեռքերով ձեռնարկեալ յարգ և համարում
ստացած են թէ՛ Հայոց և թէ՛ օտար ազգաց տղան :

Ուստի շատ կը յաւիտիւր Վարդապետ Հաստիս
լրագիրը անխնայաբար համարձակի է ստույթներէ
ով և զրաւարտութիւններով վատահամբաւ զանոնք
ի մասին կործանման մարդու հասակէ բարձր երկու մեծ
արձանաց, որոնք սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ սե-
ղանին վերայ դրուած կին մօտերս :

Սյուրուտն օրս ծանուցեալ ճշմարտութիւն մըն է
իզմիրի մէջ, թէ Վարդապետ մեծաշաք կը դարձնուի
նեկին նիւթական գործակցութիւն մի շունչեան այս ար-
ձանաց ջանքերով և նոյն օրը սուրբ Ստեփաննոս
եկեղեցւոյ մէջ զգտնուեցան :

Արդ՝ ստացել այս ըլլալով, տարակնայ չունիլ թէ
յիշեալ լրագիրը մեծապէս պիտի գըջայ իւր անխնայ
ընթացքին վերայ, որ արդէն ծանր պատասխանատու-
ութեան ներքեւ ձգած է զինքը :

ԼՈՒՆԻՏՐԵԿԼԵՆ ԼՈՒՐԵՐ

Հանգարտութիւնը կը շարունակուի մեր նախըն-
թաց թիւէն ի վեր, և այս շաբթուան եղած վա-
ճառմունքները միայն հետեւեալներն են . 700 հազ
բամբակ ի գին 580—760 ըստ տեսակին . 1200

կենդանար թիւերս տեսակ փաւամուտ՝ 945 մինչև
120 զուրուշի, ապրանքին աշխարհեանը համեմատ :
66 կողով ափսոս 123 կէս զուրուշի չեքին :

ՅՈՒՆԱՆԻՍ ԵՒ ՄԻՍԻՐ

Պարոնաք ժիւրո քոբայի գաղղիացի ծաղկա-
մշակները մօտերս Դաղղիայէն (այս քաղաքին) բե-
րած են ամեն տեսակ ընտիր ծաղիկեղան տունկեր
եւ պտղաբեր ծառեր . զորս ջափաւոր գինեղով կը-
վաճառեն : Ասոնց շտեմարանոցը կը գտնուի Ֆրան-
կաց քաղաք, անգղիական քաղաքն էր Գրեմիս-
նիւն մեջ, քիւ 14 :

ՊԵՏԱԿԱՆ ԹԻՒՆ ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ



Հայոց Գրեմիսնայ :

Ինչո՞ւ համար հիւանդութիւնները ազնաւոր
փախճան կուենան :

Վսեմի փոխանակ անոնց պատճառաւ ուշադրութիւն մա-
տուցանելու, անոնց արգելելը կը զննեն . և փոխանակ ուղղա-
կանոց արմատը ջնջելու, միայն հետեւութեանը հոգ կրա-
նիմք : Հրօշուէի գեղահատից ներգործութեանը կատարեալ-
պէս այս գործութեան հակառակ կերպիւ կազմէ . այսինքն մար-
մնոյն գաղտնի գործարարներն և արեւան շրջաբերութեան
կատարեալ անտարբեր և փնտաւար նիւթերը, որոնք բոլորեալ մե-
ջաւ, չեքմ, թուրութիւն և ֆիզիկական հոգաւոր մե-
ծաւորն . և այս կերպիւ հիւանդութեանց աղբիւրը ջնջուե-
լով, անոնց հետեւութիւններն ալ անհետ կը կրնան : Սո-
վորական գեղերը ժամանակաւոր աղբիւրներն մը միայն կը
պատճառեն հիւանդութիւն, իսկ այս գեղահատերը, ընդհանուր
յարմարաց անտի կը ջնջեն գիւնաւորութիւնը :

Վատաւորութիւն :

Վատաւորութիւնը սովորաբար յաւաք կուգայ ջրայի
անկարգութիւններէ . որոնք քրտին գործողութիւնը կը վարա-
կեն և մեր կենդանական բոլոր կարգը ամենը մէկտեղ կաւեն
Արդ՝ այս պատճառով գեղահատերը ջրային գործութիւնը (սիւ-
թեմ) կը վերահաստատեն թէ և արեւած ըլլայ, և առողջու-
թիւնը և միտքը կը զորացնեն այսպիսի գեղաբերութեան մէջ ուր
միւս ամեն գեղերը բան մը չեն կրնան ընել :

Ի իրի հիւանդութիւն և մտղ :

Երբի (գառա ճիւր) հիւանդութիւնները և մաղը շատ
անկարգ ամենաստիկ զաւեթ կատարուեն : Որչափ անձին
արդեօք այս ցաւով վտանգեալ ըլլալով, չեն գիտեր բժշկուե-
լու միջոցները, որոնք իրենց մօտը կը գտնուի : Եթէ այս գե-
ղահատերէն քանի մը հատը առնելու ըլլային, ինչպէս որ նշա-
նակուած է իւրաքանչիւր ծանուցագրին մէջ, շտապով պիտի
մղատուէին իրենց ցաւերէն : Հիւանդութիւններէն շատերը,
որոց երեւակայ և մարդոյս մարմինը, կրնան քիչ ժամանակ
ընդ ջնջուիլ այս գեղահատերը գործածելով, ինչպէս որ աղա
ցուցուեցաւ բազմաթիւ օրինակներով :

Վատաւորութիւն ժամանակ :

Եթէ կանայք հոգ չընեն ըստ ժամանակին դարման տանելու,
այն թուած և փնտաւար հիւանդութեանը երբեք անհետ
ընթացքը կազմած է, իրենց առողջութիւնը և կենսութիւնը իսկ ու-
նայեալ կը վնաս կրտարուի իրենց հեղեղէ մը, Այս ամեն վտան-
գաւոր անոնց հաստատուն գարմանը հարցուէի գեղահատերը
են և այս գեղահատի կանայք կրնան իրենց փառաւոր ժամա-
նակը (տե՛ս քրիստոնեայ առաջնորդութեան անցնել և իրենց առող-
ջութիւնը փրկել) : Այս գեղահատերը օգտակար են նաև կանանց
վերաբերեալ ամեն հիւանդութեանց և խոյուրութեանց որ կը պա-
տահան կատարեալ հասակին մէջ :

Չ զոյգաւորութիւն և տխրամտութիւն :

Հարգաւոր անձինք զոհ կը ընեն այս տեսակ սեւամտութեան
իրաքտութիւն : որ անոնց առջեւ հրէշ մը ձեւ կառուաւ, և
ինչ գիտնի իրենց ցաւերը թէ ինչպէս հարկաւոր դարմանը, այն
ինչ այսպիսի գեղաբերութեան մէջ հարցուէի գեղահատերը շատ ան-
գամ մեծ ներգործութիւններ ունենան : Իստի շարունակ գոր-
ծածութիւնը այս պատճառով գեղահատի հարկաւոր գեղաբե-
թեմը ի կերպիւս, իստի կը բժշկէ ամենամարդ գեղաբե-
թեմը և հիւանդ ըլլան : Այսինքն ջրային գործութիւնը (սիւթեմ)
կը հանդարտի և հիւանդութեանը իր առողջութիւնը կը օգտուի :
Այս գեղահատերը յատկապէս խիտ օգտակար են փոս-
հետաքայ հիւանդութեանց :

Ընդհանրական ջերմը (ֆիզիկական և քիմիական) : Ընդհան-
րութիւն (սիւթեմ) : Մաղձային ջերմը (ֆիզիկական և քիմիական) :
Խիւթ (քիմիական) : Զաւեթ որովայնի : Խիւթութիւն և նուա-
զեմն ուսոյ : Օձիկ (քիմիական) : Խիւթային ամառական օրինաց
անկարգութիւնը : Ունայեալութիւն (սիւթեմ) : Գլխացաւութե-
ան : Բորբոքութեան : Գլխակ (սարմը) : Երկնամտութեան
թիւն : Տեստեստութիւն (մայսալ) : Զօրացաւութիւն
(քիմիական) : Միջադրութիւն : Պարանոցի ցաւ : Բար-
կամ խիճ միջանոցի : Ուսոյ (քիմիական) : Կէղք (քիմիական),
ամեն տեսակ արգելք : Արդողիտեան անտարբեր :

Խմբագիր—տէր լրագրոյս,

Գլխաւոր—Պաշտատի :

Ի ՏԳՍՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ